



ՄԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

36 ՊՆ ՏԱՐԻ

ՄԱԲԱԹ 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1887

ԹԻԻ 3888

ՄԱԲԱԹԱԹԵՐԹ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ծեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻՆ Բաժա՝ նորդագրուածեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ՝ քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար 70 դր. եւ օտար երկրաց համար 15 ֆըրանք: Բաժանորդագները դրկելու է առ մատակարարութիւն Արեւելքի եւ Մասիսի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատունկեան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային Տեսութիւն. Մեքիսեդեկ Սրբազան եւ Զմիւռնիոյ հանրազրուութիւնը. Նամակ Գերմանիայէ. Յատակաձեւ Ազգային կրօնական թերթի մը. (ԹՈՐՈՍ ՏԵՐ ԻՍՏԱՆԿԵԱՆ) Բիւզանդիոն եւ Կ. Պոլիս. Ղեւոնդ Արծրունի, Մուշեղ Յրօնեցի. Մանուէլ Մամիկոնեան. (Պ. Տ.) Վէպ. Հայաստանի բարբեր. Սիսակ եւ Սոսոն, Բընուլեան սոխակներ. (Ղ. Պ. ՆԱԶԱՊԵՏԵԱՆ) Բաղրամ Շարաթական Լրոց. Արտաքին, Ներքին, Ազգային.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՈՒՐԲԱԹ 4 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵԼԻՔԻՍԵԴԵԿ ՍՐԲԱԶԱՆ

ԵՒ

ԶՄԻՌՆԻՈՅ ԶԱՆՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Արեւելք իւր օդոստոս 28 թուոյն մէջ ցաւ ի սիրտ հրատարակեց Զմիւռնիոյ հայ հասարակութեան կողմանէ երեք հարիւր ստորագրութեամբ մի հանրագիր Մեքիսեդեկ Սրբազանի առաջնորդական պաշտօնավարութեան դէմ:

Այդ պաշտօնագիրն ստորագրողը կը գանգատին թէ իրենց առաջնորդն հեռի է եկեղեցասէր լինելէ, թէ առաթուր կը կոխէ մեծամասնութեան ձայնը, թէ թոյլ կը վարուի ազգային ամեն դործոց մէջ, թէ վարժարանը լի է իրեն կողմնակից եղող ուսուցիչներով, թէ հակասահմանադրական ուղղութեան մէջ կը գտնուի, թէ ազգային դրամական վիճակն աւելի վատթար դրութեան մէջ է, եւ ի կարգին, Ստորագրողը կը գանգատին նաեւ թէ իրենց առաջնորդը Կաթողիկոսի յիշատակութիւնը կը կատարէ գլխովին հակառակ Հայաստանեայց եկեղեցւոյ

կարգ ու կանոնաց եւ թէ ըմբոստըն-թացք մը բռնած է Պատրիարքարանի դէմ: Շահպաղեան շնորհունակ վարդապետը չդրկելով ի Կ. Պոլիս, հակառակ քանիցս աղդարարութեան Հայոց Պատրիարքարանի:

Ինչպէս կը տեսնուի այս գանգատանաց մեծագոյն մասը տեղական է, որով անաչառ քննութիւն մը միայն կրնայ երեւան հանել նոցա ճշդութիւնը, կամ անճշդութիւնն: Արդար ըլլալու համար պէտք է ըսել թէ այս գանգատանաց մէջ կան այնպիսիք որ տղայական են:

Բայց որովհետեւ ազգային լրագիրը պարտաւորութիւն ունին պաշտպանել հանրային շահերն եւ զի սոքա առաջնութիւն ունին տեղական շահուց վրայ, Մասնաւ ալ սպասելով որ տեղական գանգատանաց քննութիւն մը ի վեր հանէ իրաց ճշմարիտ վիճակն, հարկ կը սեպէ իւր կարծիքն յայտնել այդ հանրագրութեան մէջ հանրային կարեւորութիւն ունեցող խնդրոց մասին, այն է քննել Մեքիսեդեկ Սրբազանի ընթացքը Վեհ. Կաթողիկոսի եւ Պատրիարքարանի հանդէպ:

Այս ընթացքին ինչ լինելը գիտնալու համար նախ պէտք է հասկնանք թէ ո՞վ է Մեքիսեդեկ Սրբազան. Ն. Գերապատուութիւն հայ եկեղեցւոյ եպիսկոպոսներէն մին է առաջնորդ վիճակին Զմիւռնիոյ, հետեւաբար բեմն հոգեւորապէս եւ քաղաքականօրէն ենթակայ է ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Կ. Պոլսոյ պատրիարքական իշխանութեանց, որով պարտաւորեալ է հնազանդիլ այն ամեն հրամանաց եւ հրահանգաց որ կը տրուին իրեն վերոյիշեալ իշխանութեանց կողմէ: Որ եւ է անհնազանդութիւն իւր կողմանէ կը նշանակէ կատարեալ ըմբոստութիւն. այդ ըմբոստութեան պարագայներն արդէն յայտնի են. Վեհ. Մակար Սրբազանի կաթողիկոսական ընտրութիւնն Ազգ. Ընդհ. Ժողովէն վաւերացուելէն յետոյ, ինչպէս ամեն առաջնորդը, նոյնպէս եւ Զմիւռնիոյ Գեր. առաջնորդն հրաւէր ստացան Կեդրոնական իշխանութեան կողմէ յիշատակելու Վեհ. Մակար Կաթողիկոսի անունը Սուրբ Պատարագի մէջ համաձայն կարգաց եւ կանոնաց Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ: Հնազանդեցան, ինչպէս որ իրենց պարտքն էր, Կեդրոնական իշխանու-

թեան հրամանաց, եւ միայն Մեքիսեդեկ Սրբազան եղաւ որ նորամուտ յիշատակութիւն մը հնարեց եկեղեցւոյ մէջ, որով գայթակղեցուցիչ եւ ըմբոստ վարմունք մը ունեցաւ:

Գալով Շահպաղեանի խնդրոյն, ամեն ոք գիտէ թէ ազգային Պատրիարքարանը քանիցս հրաւիրեց Զմիւռնիոյ առաջնորդը Պոլիս զրկել այդ շնորհունակ վարդապետը, բայց Ն. Գերապատուութիւն մինչեւ ցարդ պատ ի պատ պատասխաններով ոչ միայն յետաձգեց Պատրիարքարանի հրամանաց գործադրումն, այլ եւ համորձակեցաւ մինչեւ անգամ բացատրութիւն պահանջել ազգային իշխանութենէն, որով ըմբոստ գիրք մ'առաւ հանդէպ Կեդրոնի:

Աւելորդ աշխատութիւն մը ըրած պիտի լինիր եթէ քննութեան բովէն անցունենք Մեքիսեդեկ Սրբազանի արարքը կաթողիկոսական խնդրոյ սկիզբէն մինչեւ ցարդ, վասն զի այդ արարքներ ամենուն ծանօթ են եւ աղոնց բոլորն ալ հետեւանքն ըմբոստութիւն կենթադրէ ընդդէմ հաստատեալ իշխանութեանց:

Վարչական ամենամեծ սկզբունք մ'է որ ամէն ստորագրասեալ պաշտօնեայ պէտք է հնազանդի իրմէ վեր դրանուած պաշտօնէն: առանց այս սկզբունքի կիրառութեան որ եւ է իշխանութիւն կանգուն չէ կարող մնալ: Ո՞ր կուսակալ եւ կամ հրամանատար կըրնայ համարձակիլ անգոսնել եպարքոսական հրաման մը առանց անմիջապէս պաշտօնանկ լինելու եւ իւր օրինաւոր պատիժը կրելու: Վասն զի մեր հաստատեալ իշխանութիւնը ոյժ չունին, պէտք չէ ենթադրել թէ կրնանք նոցա դէմ ըմբոստ վարմունք մ'ունենալ. մենք այնպէս կը կարծենք որ Մեքիսեդեկ Սրբազանի նման բարձրաստիճան եկեղեցական մը, որ լաւ կը ճանչնայ հայ ազգն եւ հայ եկեղեցւոյ վիճակը, պիտի աշխատէր ընդհակառակն բարձր պահել այդ իշխանութեանց վարկն, օրինակ հանդիսանալով անձնուրացութեան եւ հնազանդութեան: Միթէ Մեքիսեդեկ Սրբազան կրնայ մեզ ըսել թէ ինչ պիտի չահ ազգն այս իշխանութեանց տկարացումէն եւ թէ ինչ պիտի գնէ այն իշխանութեանց տեղ եթէ սոցա վարկը կորսուի:

Ահա հո՞ս է մեզ համար կենսական հարցն: Ըստ մեզ, հայ ազգն այն օրն

աւելի լսելի կը լինի, երբ կաթողիկոսութիւն եւ Պատրիարքութիւն բարձրացած կրնան յենուլ ժողովրդեան վստահութեան վրայ:

Մեր այս գրութեան նպատակն էր ցոյց տալ թէ Մելքիսեդեկ Սրբազան ազգամիաս ուղղութեան մը կը հետեւի մէկ քանի տարիէ ի վեր: Մեծապէս կը սխալի եթէ կենթադրէ թէ հասարակաց կարծիքն իւր հետ է: Ընդ հաւառակն մենք կրնանք ապահովապէս յայտարարել թէ հասարակաց կարծիքն արդէն դատապարտած է զինքն իբր ըմբոստ եւ օրինազանց եկեղեցական:

Ա.ԶԳ. ԿՐԾՆԱԿԱՆ ԹԵՐԹ

Կրօնական ժողովոյ լուրջ ուղղութեան կը յանձնարարենք հետեւեալ յօդուածն զոր գրած է Զուգայեցի Պ. Թորոս Տէր Խաչակեան, որ ներկայ տարւոյ յուլիս 7 ին Աստուածաբանութեան վարդապետի վկայական ստացած է Պէրնի համալսարանէն: Կը յուսանք որ Պ. Տէր Խաչակեան թէ՛ Եւրոպայէն, ուր կը գտնուի այժմ, եւ թէ մայրաքաղաքէս անցնելով, կը փութայ իւր հմտութեամբ ծառայութիւն մատուցանել Հայաստանեայց Եկեղեցւոյ:

ՊՕՆ (Գերմանիա). 25 օգոստ.

Մեծաւ ուրախութեամբ կարդացի այսօր Մասիսի 15 օգոստոսի թուոյն մէջ՝ թէ Սառն ժողովն վերջապէս ընդունեց կրօնական թերթ մը հրատարակելու առաջարկն եւ Կրօն. ժողովոյն յանձնարարեց՝ ծրագիր մը պատրաստել նոյն թերթի ուղղութեան մասին: Այսպիսի թերթի մը պակասութիւնը վաղուց է որ մեր մէջ զգալի է եղած, եւ մինչդեռ Ազգիս աշխարհական լրագրութիւնը բաւականին զարգացած է, մեր Եկեղեցին դեռ առանձին հոնդէս մը չունի որով կարողանայ իւր ազդեցութիւնն ընդհանրապէս դարուս պահանջներէ համաձայն ժողովրդոց վերայ ներդրածել: Յառաջ ժամանակ այսպէս հրատարակութեան մը կարեւորութիւն չկար, քանզի մեր Ազգի բնածին կրօնասիրութիւնը չէր թողներ Եկեղեցւոյն որ եւ է վտանգ սպառնայ. նամանակաւոր հին ժամանակ այն հացի ճիգը չկար, որ եւրոպական լուսաւորութիւնն իւր հետ կը բերէ. եւ հետեւաբար Հայոց ջերմեանդութիւնն՝ աշխարհական մտածմամբք եւ հոգօք չէր նուազել, որպէս այժմ սաստիկ աշխարհային զբաղմունք բազում անգամ պատճառ կը դառնան Եկեղեցական անտարբերութեան, եւ դեռ մեծագոյն վնասներ կը սպառնան, եթէ չփութանք յառաջն առնել: Ապա առաջարկեալ հրատարակութիւնն, եթէ ընտիր եւ խոհեմ խնամակալութեամբ կատարուի, ամենաաւելորդ միջոց կը լինի՝ ի վերոյիշեալ սպառնալէաց յառաջն առնուլ: Քանզի Կրօն. ժողովն արդէն զբաղուած է՝ թերթի ուղղութեան նկատմամբ ծրագիր մը պատրաստել, կը ցանկամ նաեւ ես քանի խորհրդածութիւնք յայտնել այս բանի մասին, զոր խնդրեմ բարեհաճէք ձեր Մասիս շաբաթաթերթի մէջ հրատարակել:

Իբրեւ Հայաստանեայց Եկեղեցւոյ գործի մեր կրօնական թերթը պիտի նոյն եկեղեցւոյ զարգացումն ու յառաջդիմութիւնը միշտ աչքի առաջ ունենայ՝ ամենայն մասամբ անոր պաշտպան եւ աջակից հանդի-

սանայ. եւ մինչդեռ ի ներքուստ բարեկարգէ եւ զարդարէ, կարողանայ նաեւ արտաքուստ թշնամեաց յարձակումն ոչնչացնել: Մեր կրօնական թերթը կարող է այս նպատակին հասնել որպէս 1) Եկեղեցական լրագիր եւ 2) Կրօնուսոյց՝ շաբաթական հրատարակմամբ: Գարուս լուսաւորութեան չափը կը պահանջէ՝ որ այսպէս թերթ մը քանիս շաբաթական ըլլայ. եթէ ոչ, այն բարի ազդեցութիւնն որ անկէ յուսալի է դժուար թէ ունենայ: Նա պիտի իրրեւ շտաբական դաստիարակ ամէն շաբաթ իւր ցանկալի պատգամը բերէ, ամէն եկեղեցական հարցի վերայ ընդարձակօրէն եւ պարզութեամբ խօսի, որպէս զի ժողովուրդն ընտելանայ նորա ուղղութեան հետ եւ ամէն շաբաթ օր անհամբերութեամբ ստատէ նորա գալուստն, եւ ամէն դժուարին հարցի մէջ անոր միտքն ու խորհուրդն իմանայ: Ասկէ զատ ուրիշ կրօնական պատճառներ ալ կան շաբաթական հրատարակելոյն նպատիւ, զորս յընթաց գրութեանս առիթ կ'ունենամ յիշելու:

Բայց որպէս զի այս հրատարակութիւնն Հայաստանեայց Եկեղեցւոյ գործի լինի, պէտք է որ նա գլխովին եկեղեցականաց ձեռքով կատարուի եւ բոլորովին անոնց իշխանութեան ներքոյ լինի: Իբրեւ զուխ՝ Սրբազան Պատրիարքն ընդհանուր տեսչութեան արտօնութիւն պիտի ունենայ: Ն. Սրբազնութիւն (ի հարկէ՝ խորհրդակցութեամբ Կրօն. ժողովոյ) պիտի ընդհանուր կառավարիչ լինի եւ խնամակալութիւնն յանձնէ ում որ ինքն յարմար գիտէ, որ եթէ երբեք որ եւ է անկարգութիւն պատահի, առանց դժուարութեան եւ յապաղման զօրինչ անկէ կատարէ: Պատրիարքի կառավարութիւնն ուրիշ առաւելութիւններ եւս ունի: Նա կարող է իւր իրաւասութեան ներքոյ գտնուող հոգեւորականաց ձեռքով թերթի տարածման համար հոգալ, նաեւ նոյն իսկ միջոցօք ամէն կարեւոր եկեղեցական լուր ստանալ, իւր վիճակի գիտնալան վարդապետը հրաւիրէ թերթի յօդուածոց գործակից լինել, եւ: Միով բանիւ՝ Պատրիարքի առաջնորդութեամբ թերթն իւր նպատակին ամենէն լաւ կը հասնի եւ նորա ազդեցութիւնը մեծ գործ կը կատարէ:

Սրբ. առաջարկեալ թերթն ինչ պիտի պարունակէ: Ի հարկէ անկարելի է յառաջագոյն ընդարձակ ծրագիր մը պատրաստել եւ կամենալ սովաւ ընթանալ: Պիտի չմոռանանք որ այսպիսի հրատարակութիւն մէք դեռ չենք ունեցած. եւ եթէ սանդղակոց ծայրն ամբառնալ կ'ուզենք՝ հարկ է որ նախ առաջին աստիճանն ելնենք եւ տակաւ առ տակաւ աշխատինք մինչեւ ծայրն հասնենք: Պէտք է որ փոքրով սկսած, բայց այդ փոքրը պիտի հաստատուն եւ ընտիր լինել: Ժամանակն և փորձն առարկայից նիւթը կը հարստացնեն:

Ա. Տեսնենք թէ արդեօք իբրեւ Եկեղեցական լրագիր ինչ է լինելու մեր հանգէսն:

1. Այս մասին համար՝ ամենէն լաւն այն է, որ մեր աշխարհական լրագրոց ուղղութեան հետեւինք: Նախ եւ յառաջ ամէն շաբաթօրեայ թիւ պիտի երկու կամ աւելի խմբագրական հետազոտութիւնք պարունակէ ժամանակակից եկեղեցական հարցերի նկատմամբ: Այսպիսի հարցեր շարունակ կը ծագին, միայն եթէ տնօրէնն ամէն բան աշխուրջ հսկողութեամբ ժողովէ՝ խմբագրականի պակասութիւն չի լինել:

Եւ եթէ երբեմն պատահի որ հետազոտութեան արժանի ժամանակակից հարցեր չը լինին՝ կարող է ուրիշ պիտանի եկեղեցական եւ եկեղեցւոյ օրինական նիւթեր միշտ պատրաստի պահել եւ այս միջոցներին հրատարակել: Աւելորդ կը համարիմ օրինակօք ցոյց տալ թէ առարկայից նիւթերն ինչպէս պիտի լինին, քանզի մենք արդէն ընտելացած ենք այս ոճին մեր օրաթերթներին շնորհիւ: Միայն փոխանակ աշխարհական պիտի եկեղեցական լուր պարունակէ մեր թերթն եւ այնքան աշխարհական լուր որ կրօնականի լուսաբանութեան համար հարկաւոր է: Շատ անգամ մի հարց՝ թէ՛ աշխարհական եւ թէ՛ հոգեւոր հայեացք ունի, եւ մինչդեռ աշխարհական պարբերականը նոյն հարցը գլխաւորապէս աշխարհական տեսութեամբ կը բնեն, կրօնական հանդէսը պիտի հոգեւոր եւ եկեղեցական տեսութեամբ բնեն: Զորօրինակ վերջին ժամանակէն տարածայնութիւնք որ ի Կ. Պոլիս տեղի ունեցան կրկնամուսնութեան մը պատճառաւ, թէ՛ եկեղեցական եւ թէ աշխարհական նշանակութիւն ունէին: Մինչդեռ աշխարհական մամուլն իւր պարբերկատարեց, եկեղեցին չկարողացաւ իւր գործոց միջոցաւ այս տեսակ անկարգութեանց աղբիւրն որոնել, թէ ի՞նչպէս համարձակուեց մի քահանայ այսպիսի սոսկաղրութիւն կատարել, թէ արդեօք այս նման գաղտագողի զուգաւորութիւնն եկեղեցւոյ ատենի յառաջ իբրեւ սոսակ է վարկանելի, թէ ի՞նչպէս կը համարձակի հայ ոք ինքզինքը կարգուած համարել առանց գրաւոր վկայական ձեռքին, որով կանոնաւոր սոսկաղրութեան ամէն պայմանը կատարուած ցոյց տայ, թէ Եկեղեցին ինչ միջոցով գործ զնէ որ ասոր նման անկարգութիւնք չկրկնուին եւ:

2. Իբրեւ Եկեղեցական լրագիր պէտք է որ մեր Կրօն. հանդէսն ամէն եկեղեցական կարգադրութիւնք ու փոփոխութիւնք յիշատակէ, Ելմիածնայ Սիւնհոդի եւ Կ. Պոլսոյ Ազգ. եւ Կրօն. ժողովոց կարգադրութիւնք, որքան որ ծածուկ չի, հրատարակէ, նաեւ կաթողիկոսական կոնգակներն եւ ուրիշ եպիսկոպոսաց հովուականք արձանագրէ: Ամէն եկեղեցական փոփոխութիւնք թէ՛ առաջնորդական եւ թէ՛ քահանայական, ուր որ լինի, Հայաստան, Պարսկաստան, Հնդկաստան, պէտք է որ յիշուին: Պէտք է ձեռնադրութեան, տեղական տօնախմբութեան եւ ուրիշ սմին նման եկեղեցական հանդէսների ծանուցումներ լիովին յայտարարուին: Այսու՝ կարող կը լինել մեր ազգային կապն յօտար երկրի բնակեալ Հայոց հետ պնդել եւ միմեանց ազգասիրութեան հոգին վառ ու զուարթ պահել: Եւ այնքամ մեր եկեղեցական որպէս եւ ազգային յառաջադիմութիւնն ամենուրեք միանման կը լինի:

3. Ինչպէս աշխարհական նոյնպէս եւ եկեղեցական լրագրութեան կարեւոր մասանց մէկն է թղթակցութիւնն: Ա. Միմիայն թղթակցութեան միջոցաւ են կարող ի Կ. Պոլիս նստող խմբագիրք գաւառաց եւ հայաբնակ քաղաքաց ազգային եղելութիւնքն հասկանալ, եւ անոնց կշռադատութիւնն ըստ մեծի մասին թղթակցաց հաղորդեալ լուրերէն է կախուած: Առստի հարկաւոր է ամէն մեծ հայաբնակ քաղաքի մէջ հաստատուն եւ հաւատարիմ թղթակցի մը ունենալ որ հետզհետէ քաղաքի եկեղեցւոյ գրութիւնն ըստ հարկին հաղորդէ: Թուրքիոյ համար կարծեմ Ս. Պատրիարքը կարող

է այդ մասին առաջնորդաց միջոցաւ հարկաւոր որոշումներ ընել առանց ծանր ծախուց: Բ. Արօն. թերթը պէտք է նաեւ բաց լինի առանձին թղթակցութեան, որ ամէն ցանկացող կարող լինի կարեւոր հարցերի վերայ իւր միտքն յայտնել, բանցիկ այսպէս իսկ կարող ենք ժողովրդոց հոգեւոր իղձն զարթեցնել եւ զանոնք քաջալերել որ այս նման կենսական բաների վերայ խորհին եւ խորհրդակցին: Գ. Ասկէ զատ ուրիշ տեսակ առանձին թղթակցութիւն եւ կայ որ յեւրոպայ շատ տեղ սովորութիւն է, բայց չը կարծեմ մեր մէջ երբեք տեսած լինիմ: Ըստ այսմ ամէն ընթերցող կարող է խմբագրէն ինչ եւ է տեղեկութիւն հարցնել եւ խմբագիրն յանձն կ'առնու հարցերն իւր գիտութեան համեմատ պատասխանել: Մեր թերթի այս մասը պիտի լոկ կրօնական հարցերի սահմանի, զորօրինակ որոնք եկեղեցական արարողութեան նկատմամբ, թէ ինչ կը նշանակէ, ինչ է պատմութիւնը, թէ օտար եկեղեցոյ մը այս ինչ կամ այն ինչ սովորութիւնն ուստի՞ է, թէ այս ինչ ընկերութեան նպատակն ինչ է, թէ Եկեղեցոյ վարդապետութիւնն այս բանի մասին ո՞րն է եւն. եւն. Այս տեսակ թղթակցութեանց պատասխանը, առանց ամէն թուղթ հրատարակելու, անուան կամ նշանագրոյ մը ներքեւ պիտի տրուին: Զայս կարեւոր մասն կը յուսամ որ մեր կրօնական թերթի հրատարակիչը զանց չեն առնել հաստատելու: Այս ճանապարհաւ նաեւ կարող կը լինին խմբագիրք ժողովրդոց կարօտութիւնն եւ պիտոյն առաւել եւս իմանալ եւ իւրեանց խմբագրականը ըստ կարեաց նոցին յարմարել:

Բ. Արօն. հանդիսարանիս երկրորդ գըլաւոր մասն՝ Աստուածաբանականն է. արդեօք առաջարկեալ թերթն իբրեւ կրօնաւոյց ինչ է լինելու: Եթէ առաջին (ըրազրական) մասն Եկեղեցոյ արտաքին կենաց ու յառաջագիծութեան կարօտութիւնը կը լցուցանէ, երկրորդ մասն անոր ներքին ու հոգեւոր կեանքը պիտի բարգաւաճէ եւ զօրացնէ. թէպէտ եւ երկրորդն միասին են ընթանալու, սակայն առաջինն երկրորդին ծառայող միջոց է. այնպէս որ Եկեղեցոյ արտաքին կառավարութիւնը բան մը չարժեք առանց ի ներքուստ անոր հոգեւոր զգացողութիւնն աճեցնելու՝ որ է բուն նըպատակ ամենայն կրօնից: Հայը պիտի գիտենայ՝ թէ ինչ կը նշանակէ Քրիստոնեայ լինելը, թէ ինչու համար է ինք Քրիստոնեայ, թէ ինչ պէտք է ընել որ Քրիստոնեական կեանք վարէ, թէ Եկեղեցին իւր համար ինչ կարեւորութիւն ունի եւն. եթէ մեր թերթը կարողանայ իւր ընթերցողաց՝ այս գիտութիւնը պարզ եւ ժողովրդական ոճով աւանդել, յայնժամ յիշաւ մեծ ծառայութիւն մը ըրած կը լինի Եկեղեցոյն եւ թերթի հիմնադիրներին արժանաւոր օրհնութիւն մը կ'ընծայէ Ազգիս: Ճշմարիտ է, մեր Եկեղեցին իւր գերազանձ աղօթիւք, երգօք եւ քարոզիւք պակասութիւն մը թողած չէ՝ զոր հիմայ պարբերական թերթով մը լրացնենք. այլ ո՞րքան հայը կը գտնուին որ այդ գրեթէ աստուածաշունչ աղօթից եւ երգոց իմաստը լիովին հասկանան: Ճշմարիտ է, չկայ եկեղեցի մը, որ Ս. Գրքն այն յաճախութեամբն գործածէ որպէս մեր եկեղեցին (այս կարծեաց չհաւանողն թող մեր ճաշոցն ու ժամագիրքն քր. եւ է օտարազգի նոյնանման մատեանց հետ համեմատէ եւ զանազանութիւնն իսկոյն ակներեւ կը լինի), բայց ո՞րքան Հայը

կը գտնուին որ մեր այդ փառաւոր ազգային գանձու կարեւորութիւնն հասկանան: Յիշաւի պզգային մեծ գանձ է մեր Ս. Գրքն եւ պարտական ենք յամենայն ժամ Աստուծոյն փառք տալ որ իւր Սուրբ Բանն միանգամայն մեր Ազգի մատենադրութեան առաջին տեղը կը բռնէ իւր վսեմ լեզուաւ, որոյ մասին Բագրատունին արդարութեամբ կը վկայէ՝ «Թէպէտ եւ թարգմանութիւն, սակայն հարազատութիւն հայերէն խօսից գրեթէ քան յամենայն գիրս ի նմա փայլէ»:

1. Որպէս զի կարողանայ ժողովուրդն մեր Եկեղեցոյ հոգեւոր հարստութիւնն վայելել, հարկաւոր է որ Արօն. թերթն իւր մէն մի շարաթական թուոյն մէջ մօտակայ մի տօնի բացատրութիւն հրատարակէ: Յարմար է որ այնպիսի մի տօն ընտրէ որ գէթ մի շարաթ գլինի թերթի հրատարակութեան կատարուելու լինի որպէս զի Պոլէն հեռի բնակողը շատ ուշ չստանան: Եթէ Տօնը Սրբոյ մըն է, պէտք է անոր վարուց կարճառօտ նկարագրութիւնն ընել, եւ ուր եկեղեցական աղօթից կամ երգոց մէջ անոր յատուկ յիշատակը կը լինի, ընթերցողի ուշադրութիւնը դարձնել առ նա: Այլ եթէ Տէրունական Տօն է՝ անոր նշանակութիւնը Քրիստոնէի համար նկարագրել հանդերձ պիտանի եւ հոգեւոր խորհմամբ եւ մտածութեամբ:

2. Մէն մի համար պէտք է նաեւ յաճախ գործածուած շարականաց կամաղօթից մէկը կամ մի մասը պարզ բացատրութեամբ պարունակէ: Ասոնց ամենէն վերադասելի են Ներսէսեան գերաբուն երգերն, որպէս «Այսօր անձառ», «Արարչական», «Նորաստեղծեալ», «Նայեաց սիրով» եւն. նաեւ առաւօտեան եւ երեկոյեան աղօթքներն «Փառք ի բարձունս», «Հաւատամք», «Պատարագի երգերն եւ աղօթքներն ալ այս մասին կը վերաբերին եւ յատուկ ուշադրութեան արժանի են: Բայց պիտի զգուշանալ թերթն այսպէս բաներով շատ չլցնել, փոքր, այլ ընտրանք եւ լաւ աշխատութեամբ:

3. Սուրբ Գրոց բացատրութիւնն եւս պիտի մէն մի թուոց մէջ իւր յատուկ յօդուածն ունենայ: Սկիզբն լաւ է որ առաջին տարին կիրականօրեայ Աւետարանը կամ թէ այն Տօնի Աւետարանն, որոյ բացատրութիւն նոյն թուոյն մէջ ի ներքոյ 1. ի տըրուած է՝ ընտրել Բնագիրն՝ կամ ի Ս. Էջմիածին տպած Ճաշոցն եւ կամ Վենետիկ (1860) Աստուածաշունչէն ընտրած, պէտք է որ յաւաք մեծ տառերով տպուի: Յետ այնու լեզուաբանական կամ նիւթոյ որ եւ է դժուարութիւնը բացատրութիւն, որպէս զի ընթերցողն հասկնայ այս ինչ բանի պարզ միտքն ո՞րն է: Ապա կարող է հեղինակը նաեւ խորհրդաւոր մեկնութիւն նշանակել եւ թէ ինչ խրատ ենք ստանալու այս ընթերցուածէն եւն. ինչպէս որ Աստուածաբանն ինքն քաջ կը հասկանայ:

4. Զինի այս տեսակ գիտնական կրթութեանց՝ Քրիստոնէի զգացմանց համաձայն է որ նաեւ գործօք այս գիտութիւնը պիտոյացնէ: Ասոր համար իբրեւ չորրորդ մասն Աստուածաբանականին՝ պէտք է որ կարճ մտածութիւն մըն ալ պարունակէ մեր Հանդիսարանն, որպէս Քրիստոսի անօրինութեանց կամ Աստուծոյ մեծութեան եւ բարերարութեան վերայ: Իբրեւ նիւթ այս տեսակ հոգեւոր մտածութեան չգիտեմ ինչ գիրք աշխարհիս երեսին յարմարագոյն է քան զՆարեկ: Ո՞ր հոգեւորական որ Նարեկայ երկնաթռիչ աղօթից ի-

մասան հասկանալ գիտէ՝ չէ կարող նոյն բանը վկայել: Ճշմարիտ է, գրեթէ ամէն հոգեւորական եւ բազում աշխարհականք Նարեկայ աղօթագիրքն ունին եւ առանձին պաշտամանց մէջ գործ կ'ածեն, բայց չկարծեմ սխալել եթէ ասած ըլլամ, թէ շատ փոքր անձինք կը գտնուին որ Նարեկայ խրթին ու խորին միտքն ըմբռնել կարենան: Ուստի շահաւէտ կը լինի Նարեկայ աղօթից (մանաւանդ անոնց որ հասարակօրէն գործածական են) բացատրութիւնն եւս այս մասին չորրորդ յօդուածը կազմէ: Կարելի է երբեմն նաեւ ուրիշ աղբիւրներէն քաղել, որպէս Թովմաս Պէմպազեոյ Նըմանութիւն Քրիստոսի ընտիր գրքոյկէն, որ իւր պարզութեամբն յերոսոյայ ամէն ջերմեռանդ Քրիստոնէի առանձին սիրելին է, կամ թէ ընտիր քերթուածիւք փոխարինել որով մարթ է ոմանց հոգեւոր քերթողութեան հանձարը զարթեցնել:

5. Իբրեւ վերջին յօդուած Աստուածաբանական մասին, շատ օգտակար կը լինէր մեր կենդանի վարդապետաց քարոզներէն տպագրել: Ի. Կ. Պոլիս Արօն. Հանդէսն իւր առանձին համառօտագիրը պիտի ունենայ որ կարողանան քարոզիչները բառ առ բառ գրել, եւ հեռու տեղուանց պիտի իսկ քարոզիչներէն խնդրել իւրեանց քարոզի բնագիրն: Հարկ չկայ որ ամէն շարաթ այսպէս քարոզ մը հրատարակել, բայց ըստ յարմարութեան եւ ընտրանք:

Ահաւասիկ սոքա են իմ բանի խորհրդածութիւնքն զոր կամեցայ ձեր պատուելի ընթերցողաց առաջը դնել ի ըննութիւն: Կարելի էր՝ այս ծրագիրն ուրիշ շատ առարկայիւք եւս ստուարել, եւ բոլորն ալ անյարմար չէին լինել, բանցիկ մենք ուրիշ կրօնական թերթ մը չունինք. բայց ինչպէս յառաջագոյն յիշեցի սանդուղքն աստիճան առ աստիճան պիտի ելնենք եթէ ծայրն հասնենք փափաքն ունինք. թեւեր չունինք որ թռչենք:

ԹՈՐՈՍ ՏՐ. ԻՍԱՀԱԿԵԱՆ
Աստուածաբան փարիսաւք

Յ. Գ. Իբրեւ անուն Հանդիսիս թերեւս «Հայաստանեայց Եկեղեցի» կամ լոկ «Եկեղեցի» յարմար լինի:

ԲԻԻԶԱՆԴԻՈՆ ԵՒ Կ. ՊՈԼԻՍ

Լեւոն Արծրունի յաղթող Բուլղարաց և կայսր Բիւղանդական կայսրութեան. — 820ի Շնորհաւ գիշերը. — Մուշեղ Յրօնեցի. — Մանուէլ Մամիկոնեան խնամակալ կայսրութեան. — Մանուէլ կը ջախջախէ պատկերամարտութեան աղանդը:

815 յուլիս 11ին Լեւոն Արծրունի թագադրուեցաւ Ս. Նիկիւփորոս պատրիարքէն, մեծ հանդէսով. գրաւոր խոստում ըրաւ հակառակ ոչինչ ընել ընդդէմ եկեղեցոյ վարդապետութեանց: Նախ պահեց իւր խոստումն եւ իւր հանձարեղ խմտութեամբ եւ կորովի քաջութեամբ զօրացաւ օր ըստ օրէ եւ շատ նշանաւոր հանդիսացաւ իւր մի բանի առաւելութեանց պատճառաւ Բիւղանդիոյ եղական կայսերաց մին համարուեցաւ: Այսպէս ցայն վայր Բուլղարը շարունակաբար կ'արշաւէին Բիւղանդական կայսրութեան միայ եւ կ'առաջատակէին երկիրը: Լեւոն միայն իւր իշխանութեան ժամանակ երկիրս մեծ կոտորած տուաւ Բուլղարաց եւ այնպիսի նեղ վիճակի մէջ ձգեց ժամանակակից այդ հզօր աղգն:

որ այս վերջինս պարտաւորեցաւ հաշտութիւն տալ իր լեւոնի եւ այդ հաշտութիւնը չհորհրէ հայկազն կայսեր՝ վաթսուներորդ տարի տեւեց նորա մահուանէն յետոյ։ Լեւոն բաց աստի նուաճեց շատ այլազգիներ, որ պարբերաբար կ'արշաւէին բիւզանդական կայսրութեան վրայ, եւ առաւել ընդարձակեց կայսրութեան սահմանները։ Սակայն Լեւոն եւս նման ժամանակակից մի քանի կայսերաց, պատկերամարտ հանդիսանալով սկսաւ մեծ հալածանք հանել սրբոց պատկերներու դէմ, եւ պատկերամարտ խորհուրդին անսալով իւր հալածանքն հասուց ծայրայեղութեան. աքսորել տուաւ շատ մարդիկ, շատերն ալ նահատակեց։ Նիկեիոսի Պատրիարքը գահընկէց ըրաւ, եւ Պրոկոպիա թագուհւոյն մագերէ կտրել տալով իւր որդւոյն հետ միասին աքսորել տուաւ Իլիւսանաց կղզին այն է արդի Պոլինիպոն։ Իւր այս հալածանաց պատճառաւ Լեւոն անուանեցաւ «Բաբելոն» այսինքն գետնաբլիճ։ Լեւոն ունէր չորս որդի, Սմբատ, Բարսեղ, Գրիգոր եւ Թէոդոս, իւր Թէոդորա կամ Թէոդոսիա կայսրուհիէն որ Արշաւիր գանձապետի աղջիկն էր։ Լեւոն ուղեւոր յաջորդն ընել Սմբատ որդին, միտքը դրաւ իրեն գահակից ընել զնա, սակայն կը վախճար Յունաց զօրքերէն։ Այլ երբ պատերազմի առիթ ներկայացաւ, հին զօրքերը պատերազմի չըկեց, եւ նոր զօրախումբ կազմելով մեծ հանդէս կատարեց մայրաքաղաքի մէջ եւ կայսերական թագ գնելով Սմբատի գլուխն անուանեց զնա իւր աթոռակիցն եւ կայսերակիցն. անունն ալ փոխելով դրաւ Կոստանդին։ Ապա առաւ պարգեւ տուաւ ժողովրդեան, որ բարձրաձայն սկսաւ աղաղակել «Կեցցէ Լեւոն կայսր, կեցցէ Կոստանդին կայսր»։

Սակայն Միքայէլ միաբանելով մի քանի յոյն մեծամեծաց հետ, խորհեցաւ սպլըստամբել Լեւոնէն։ Իսկ սա իմանալով դաւադրութիւնը կը բռնէ զնա եւ կը բանտարկէ չլթայակապ, որոշելով ծննդեան ճրագալոյցին սպաննել զնա սոսկալի մահուամբ։ Նախ պիտի հրամայէր սուր միսիկ նորա մի կողէն մինչեւ միւսն, ապա ողջ ողջ այրել իւր առաջ։ Սակայն Թէոդոսիա կայսրուհին արգիլեց կայսեր այդ սոսկալի դիտաւորութիւնը, նորա օտն ընկնելով եւ աղաչելով որ արիւն չթափէ այդպիսի հանդիսաւոր օրուան մէջ։ Լեւոն զիջանելով իւր կնոջ աղաչանաց միայն խոստացաւ յետաձգել սպտիժը։ Բայց Խորալի նախադրացուներ կը յուզէին իւր միտքն, այնպէս որ հետեւեալ գիշեր չկարողանալով քնանալ ելաւ եւ ուղեց աչքէ անցունել կալանաւորն որ քիչ հեռուն բանտարկուած կը մնար։ Զգուշութեամբ ներս մտնելով տեսաւ զնա որ հանդարտութեամբ կը քրնանար սահապանի անկողնի վրայ։ Լեւոնի ներկայութենէն ոչ ոք արթնցաւ։ Հայկազն բռնակալն ապա դուրս ելաւ ներքին սաստիկ զայրացմամբ։ Միքայէլ տեղեկանալով իւր սոսկալի մահուան, իսկոյն իւր մօտ կը կոչէ մեղսակիցներն եւ կ'առաջարկէ նոցա ապստամբիլ։ «Եթէ, կ'ըսէ Միքայէլ, այս գիշեր բանտէն չհանէք զիս, առե՛նք ալ պիտի մատնեմ կայսեր եւ դուք ալ ինձ հետ միասին պիտի ընդունիք ձեր չարեաց պատուհասն»։ Ամենքը զարհուրելով այս խօսքի վրայ յանձն առին միաբանիլ եւ սպաննել կայսրը։

Բիւզանդական կայսրները սովորութիւն ունէին շատ առաւօտ երթալ սպառնալ եւ կեղեցիկն եւ սաղմոս ու շարական երգել

զպիրներու հետ այս սովորութիւնն ունէր մանաւանդ Լեւոն, որ երեւելի էր իւր քաղցր եւ ներդաշնակ ձայնով։ Լեւոն շատ անգամ իւր կայսերական աթոռի վրայ կեցած կը ձայնակցէր զպիրներու երգեցողութեան եւ երբեմն ալ իւր ներդաշնակ ձայնով կը թնդացնէր եկեղեցին։ Դաւիթ մարգարէի սաղմոսներն երգելով։

Ծննդեան գիշերն էր։ Գուրսը կը տիրէր սոսկալի ցրտութիւն։ Կատաղի մրրիկը մտնէր նարար կը թափանցէր ամեն ուրեք եւ կայսերական եկեղեցւոյ նրբանցքներն։ Եւ գիշերը խաւարոյն էր եւ ճրագներու տարտամ լոյսերն հազիւ հազ կը լուսաւորէին աստ անդ։

Սեւագդեստ կրօնաւորներ զգուշաբար կը մտնէին սպառնալ եկեղեցին, այլ ժամերգութիւնը դեռ չէր սկսած։ Վերջապէս ներս մտաւ եւ Լեւոն ու զնաց բազմիւ իւր պատուակալ տեղը։ Բոլոր ներկայք եւ նոյն ինքն կայսրը ցրտութեան սպառնալով զլուսինն դրած էին մի տեսակ լայն վեղար որ կը ծածկէր մինչեւ երեսն։ Լեւոն պատրաստուեցաւ նշան տալ եւ ինք որ երաժշտութեան բուն սիրահար էր, լի զգացմամբ եւ եռանդով դէպ ի նոյն օրուան խորհրդաւոր յիշատակները սրտազեղ ձայնով սկսաւ թնդացնել եկեղեցին այդ օրուան սաղմոսերգութեամբ։ Այլ փոխանակ մարդկային ձայնի ընկերակցութեան բուն խորտու՛մ մը լսուեցաւ. աղաղակներ կը բարձրանան, զէնքեր կ'սկսին փայլատակիլ եւ շուարած հոգեւորականութիւնը սոսկումով կ'սկսի փախչիլ։ Այդ դաւաղ իրենք Միքայէլի կուսակիցներն էին որ կրօնաւորի ծպտեալ զգեստներով եւ զինեալ խառն ի խառն ներս մտած էին քահանայներու հետ, անտարակոյս նախապէս կաշտուելով սոցանէ մի քանին։ Լեւոն հայկազն վայրկենապէս ըմբռնելով դաւադրութիւնն ուղեց փախչիլ, սակայն փախչիլն անհնար լինելով խոյս տուաւ խորանի ներսակողմն ուր սկսաւ կռիւ մը, սոսկալի եւ ահաւոր կռիւ։ Ամենուրեք կը տիրէր կատարեալ խաւար, զի լապտերները բոլորովին խորտակուած էին։ Բոլոր սպառնաւոր մարդիկ խոյս տուած էին արձակելով զարհուրելի ճիշեր, եւ մնացած էին միմիայն դաւաղ իրենք։

Կայսրը կարճահասակ էր, ալիսոյժ եւ թեթեւաշարժ։ Կաշկանդուած սեղանի ետեւ կը ջանար պաշտպանել իւր ձեռքերն եւ ոտներն։ Անդ բռնած ունէր սղնձեայ ոսկեգոծ խաչելութիւն մ'որով կը պատըսպարուէր հորաւածներէն։ Վերջապէս Լեւոն ուժասպառ եղաւ անհամաձայն զօրութեան հանդէպ եւ շնորհ խնդրեց, այլ դաւադիրները մահչեցին։ Հրեժեհրութեան եւ «չեհր»։ Ապա ծանր սուրն իջնելով մէկ հարուածէն կտրեց խաչելութեան մի թեւն եւ կայսեր ուսը։ Լեւոն Եւ վար ընկաւ յուսահատ մահմամբ։ Դաւաղ իրենք տակաւին ողջ ողջ յօշոտեցին նորա անդամները, ձեռները եւ վերջապէս կտրեցին գլուխը։ Վտարանդի Նիկեիոսի Պատրիարքը լսելով այս լուրը գոչեց. «Եթէ Եւ Օրթոդոքս եկեղեցին ազատեցաւ անգութ հակառակորդէ մը, սակայն կայսրութիւնն ալ կորոյս իւր օգտակարագոյն իշխանը»։ Ապա իսկոյն Միքայէլ եկեղեցի մտնելով սպակեցաւ կայսր Բիւզանդիոյ։ Սորա հրամանաւ Թէոդոսիա կայսրուհին իւր Սմբատ, Բարսեղ, Գրիգոր եւ Թէոդոս որդւոց հետ միասին աքսորեց Պոնտի կղզին, Պոնտի, որ տարօրինակ զուգադիպութեամբ իւր պատմական գոյութեան սկիզբէն մինչեւ այսօր

իւր անուան հետ միշտ անբաժն պահած է հայ անունն, եւ այժմ իսկ գրեթէ բոլորովին հայկական կղզի մ'է։ Մայր եւ որդի զըրուեցան նաւակի մը մէջ։ Նոցա հետ կար եւ նորօրինակ տոպրակ որ արիւն կը բռնէր։ Եւ այդ մորթէ տոպրակն իւր մէջ կը սլաւունակէր հայկազն կայսեր յօշոտեալ դիակըն, որ թաղուեցաւ մենաստանի մը պարտիզին մէջ։ Թէոդոսիա կուսանոց մտաւ, իսկ կայսերազուն իշխանները Միքայէլի անգութ հրամանաւ դատապարտեցան կենդանի մահուան, ներքինիացման։ Կրտսեր որդին չքիմանալով սոսկալի գործողութեան մեաւ քիչ օրէն. իսկ միւս երեքը կրօնաւոր եղան, նոր անուան ներքեւ։ Պատմութիւնը չյիշեր թէ արդեօք դոքա եւս Քրնալը ատայի մէջ թաղուած են։

Այս նշանաւոր հայկազն կայսեր եւ նուրա ընտանեաց այս տխուր ու սոսկալի մահուան նկարագրութեանէն յետոյ կը հասնինք Մեծն Վասիլ հայկազն կայսեր պատմութեան, որ իւր երեւելի քաջագործութեանց համար փառք եւ պատիւ բերաւ հայ անուան։

Լեւոն հայկազն կայսեր մահուանէ տասն տարի յետոյ, Թէոփիլոս կայսեր ժամանակ բիւզանդական կայսրութեան մէջ կը փայլէին երեւելի հայ իշխաններ, որոց մին էր Մուշեղ Յրօնեցի, որ իւր նշանաւոր քաջագործութեանց համար Թէոփիլոս կայսրն իւր Մարիամ աղջիկն կնութեան տուաւ նմա եւ անունն ալ դրաւ Սլեբոս միւս նոյն ժամանակ անուանեց զնա պատրիկ, մեծ իշխան եւ կեսար։

Սլեբո Մուշեղէն աւելի նշանաւոր հանդիսացաւ այդ միջոցին մի ուրիշ հայկազն իշխան Մանուէլ Մամիկոնեան, Մամիկոնեաց ցեղէն։ Յունաց շատ սպառնալիցներ մեծապէս գովեստով կը խօսին Մանուէլի մասին եւ կը պատմեն թէ նորա քաջութեան համբաւն հոգակուած էր ոչ միայն Յունաց այլ եւ բոլոր ժամանակակից ազգերու մէջ։ Բոլորովին վաճեց Յունաց թշնամիներն եւ խորտակեց նոցա զօրութիւնը։ Մինչեւ անգամ մի պատերազմի ժամանակ քսան հինգ հազար հոգի գերի բռնեց թշնամիներէն։ Մի ուրիշ անգամ փրկեց կայսեր կեանքն, որ այլ եւս փրկութեան յոյս չուներ, եւ սորա համար կայսրն յաւիտեան երախտապարտ մնաց նմա։ Թէոփիլոսի մահուանէ յետոյ կայսր նստաւ նորա Միքայէլ փոքրիկ տղան իւր Թէոդորա մօր հետ. իսկ Մանուէլ նշանակուեցաւ նոցա վրայ հոգաբարձու եւ արքունեաց գործակալ։

Այդ ժամանակ եւս ամալաւին գոյութիւն ունէր պատկերամարտութիւնը։ Մանուէլ իւր հոգաբարձութեան միջոցին կը հիւանդանայ ծանրապէս, այնպէս որ ալ ապրելու յոյս չմնար։ Տէրութեան այդ սիրելի անձնաւորութեան հիւանդութիւնը խորին տրտութեան մէջ կը ձգէ համայն ժողովուրդը, շատ մարդիկ կ'սկսին այցելութեան երթալ. կ'երթան եւ սրբակրօն միայնակեացներ, որ կ'սկսին սիրտ տալ հոգեւոր հիւանդին։ Քաջալերուէ ո՛վ մեծ դ Մանուէլ Աստուած վերստին առողջութիւն պիտի տայ քեզ։ Մանուէլ կը պատասխանէ. «Մահուան դուռն հասած եմ արդէն, բայց եթէ Աստուած վերստին շնորհէ ինձ կեանքս, պիտի մառաբանեմ զնա եւ պիտի ջանամ պատկերամարտութեան մոլորութիւնը ջնջել կայսրութեան մէջէն»։ Այդ օրէն կարծես նոր ոգի առաւ Մանուէլ եւ արդարեւ երթալով առողջացաւ բոլորովին։ Առողջութենէն անմիջապէս յետոյ յորդեա

ՍԻՍԱԿ ԵՒ ՍՈՍՈՒՆ (2)

ԲՆՈՒԹԵԱՆ ՍՈՒԱԿՆԵՐ
(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՔԵՐ)

Այս խօսք առնելով գիւղացեան, ըստաւ. «Գրացիներս, ես սովորութիւն չունիմ ձեր գիտցած թանի վրայ ձեզ ծանօթութիւն տալով ժամանակ կորսնցնել: Քանի որ դուք ամենքդ ալ գիտէք Աղթամարայ վանքն, ի մօտոյ տեսած եւ հասկցած էք նորա վիճակը. ձեզմէ ամեն մէկդ կրնայ իւր կարծիքն յայտնել այս խնդրոյ մասին. ես իմ վերջնական ըսելիքը նստիս վերջին պահուն կը թողում»:

Գիւղացեան այս խօսքերը կ'արտաբերուէին մի այնպիսի կողորդային խորոտ շեշտերով, որ ամեն մարդ կրնար այդ թընդիւններէն ըմբռնել նորա ներքին միտքն. ուստի եւ սկսաւ խօսիլ ուրիշ մ'որ գեղջուկ առաջադիմական մը լինելու գերն ունէր:

Պ. Գէորգ, առանց գրի եւ կարգալու խիստ վարժ էր թուաբանական հաշիւներու մէջ, ուստի իւր նախաբան թուով սկսաւ. «Քառասուն տարի է որ ես իմ աչքով կը տեսնեմ եւ ամեն անգամ կը լսեմ որ յաճախ վանքը նեղութիւն ունի, աթոռը ձախորդութեանց հանդիպած է. եւ, եւ խօսքերով ու բառերով այս գունակ տուրքեր կուտանք. այդքան տարիներու շրջանին, ինչ կ'ըլլար որ, որ մ'ալ լսէինք թէ «Աթոռը բաւական կանոնաւոր վիճակ մ'ունի, միաբանական կարեւոր դաս մը կը սնանի հոն» յօգուտ մեզ նման անտէրներու ապագայ լուսաւորութեան. եւ կամ թէ՛ քանի մ'անկեանքեր ու տնանկներ կը պատուարուին անդ եւ թէ մեզ վերաբերեալ գործերու մասին կարեւոր ձեռնտուութիւնք կը լինին եւլ» ինչ որ եղած է այս վանքի վիճակն յիշած ժամանակամիջոցէն ի վեր, վրստահ եղէ՛ք որ նոյնը պիտի մնայ եւ թեւեւս աւելի վատթարանայ, քանի որ ապագայի համար պատրաստութիւն չկայ եւ եղածն ալ կ'ոչնչանայ: Ուրեմն, Հայր Սուրբ, մեզ յուսախաբ մ'ընէ՛ք այդ պիտի խօստաններով, մենք եթէ բոլորովին չենք ժխտեր այդ պարտաճանաչութիւնը, պատճառը մեր կրօնն եւ հաւատքն է, մենք կը հաւատանք որ ողորմածութիւնն իւր հրաշքներն ունի, եւ այդ հաւատքով միայն դարձեալ կը յորդորեմ իմ բարի գրացիներն որ ետ չմնան իրենց այն հնաւանդ սովորութիւններէն՝ որն որ մեր հարց ու նախահարց յիշատակի եւ գործի հետ կապ ունի: Այդ կապն ո՞վ գիտէ թէ որքան ամուր է զօգած զմեզ մեր վանքերու, մեր եկեղեցիներու եւ նախնեաց անմահ յիշատակաց հետ. ինչ է որ մենք այնքան կը նեղուինք եւ շատ անգամ ալ մարդկային մտածումներէն վեր անարդարութեանց կը դատապարտուինք ու չենք հեռանար այս երկրէն: Մեր հարց յիշատակներ, հայրենի հող եւ մանկութեան երջանիկ կեանքի օրորանն եղող տունն է. Ասոնցմէ դուրս, դեռ այն հիասքանչ վաճառքն եւ ուրիշ շատ մը բաներ որոնք մեր ազգային անցեալ կեանքի կտակներ են եւ կը կապեն զմեզ կը քաղցրացնեն այս լեռն ու ձորը, կը դրախտացնեն այս երկիրն ու աղով միայն մենք շատ անգամ կ'սիրոյրուինք. մեր ներքին եւ արտաքին կեանքի ցաւոց ծանր բեռանց կը տոկանք»:

Բնութիւնը որա կայսրուհին, որպէս զի հրաման հանէ պատուել Ս. պատկերներն համայն կայսրութեան մէջ: Կայսրուհին չէր համարձակեր ընդունել Մանուէլի առաջարկն պատկերամարտից ահագին բազմութեան եւ մանաւանդ նոյա մեծ զօրութեան պատճառաւ. սակայն Մանուէլը ըսաւ. «Եթէ չկատարես, գիտցիր որ իսկոյն գահընկէց կ'ընեմ քեզ եւ զաւակդ, եւ ուրիշ մը կը բարձրացնեմ կայսրական աթոռին վրայ»:

Թէոդորա զիջաւ այս սպառնալեաց վրայ եւ իսկոյն ժողով գումարելով հրաման հանեց որպէս զի ամեն ուրեք յարգուին Ս. Պատկերներ: Պատկերամարտութեան սոսկալի կոխն, որ զարեւ տեսած էր՝ վերջապէս դադարեցաւ շրջանակէ Մանուէլ Մամիկոնեանի, ում երախտապարտ է յունական եկեղեցին այդ մեծ գործի համար: Մանուէլ մեռաւ խորին ծերութեան մէջ, միշտ սիրուած եւ յարգուած ամենէն, եւ թաղուեցաւ այն վանքի մէջ զոր ինք կառուցած էր եւ որ իւր անուամբ կը կոչուէր Մանիկիերտ:

(Մարտնախէլէ)
Պ. Տ.

ՍԱՌԱ ՊԵՌՆԱՐԻ ԱՀԱԳԻՆ ՇԱՀԵՐՆ.
ԵՒ ԲԱՆԴԻԻ ԳԼԽՈՒՆ ԵԿԱՄ ՓՈՐՁԱՆՔԸ

Սառա Պեռնարի հասոյթներն, հարաւային Ամերիկայի մէջ ըրած վերջին պոստի միջոցին, այնքան ահագին են որ ոչ մէկ դերասանուհի նոյնքան շահած է: Սակայն անհոգն Սառա հիմա մէկ սու չունի:

Բաղդի եւս մեծ յաջողութիւն ունեցաւ, ահագին գումարներ դանձեց ի Մէքսիկո եւ ի հարաւային Ամերիկա, սակայն թէ մնաց որ զոհ երթար Գլխոյն մը որ փորձեց պայթուցիկ ուռմը մը նետել նորա վրայ, Սան-Ֆրանչիսկոյի Մեծ Օրէնային մէջ: Տեսարանին վրայ քանի մը անգամ ետ կանչուած էր, երբ հանդիսատեսն մը ոտք ելաւ, աթոռին տակ պահուած գունդ մ'առաւ եւ բարձրացնելով զայն, նետելու վրայ էր երբ ձեռքին մէջ պայթեցաւ այն, թեւը կոտրելով, դէմքը ջախջախելով եւ ուրիշ վէրքեր պատճառելով: Եթէ այդ մարդն ինքզինքն դրած չլինէր ընդ պաշտպանութեամբ ոստիկանի մը, որ իւր դէմն ելաւ այն պահուն ուր սանդուղին վար կը խոյանար, յօշ յօշ պիտի պատուէր կառնած ամբողջին Բաղդի մեծ պաշարին եւ մտաց արթնութիւն ցոյց տուաւ եւ յաջողեցաւ հասարակութիւնն հանդարտեցնել, երգելով անգլիական «Հոմ, անուշ հոմ» երգն:

Հէգ Բաղդի: Հրաշք մ'է որ ջլային տաքնապէ մը յանկարծամահ չեղաւ, չընաղեցաւ, եւ կամ մազերը չճերմկցան սարսափէ: Կ'երեւակայէ՞ք Բաղդին սպիտակ մազերով Գեղեցիկ վարս մը հիանալի զարդ մ'է կնոջ համար եւ ամենամեծ դժբաղդութիւն մը եթէ կորսնցնէ զայն, — դժբաղդութիւն որուն առաջքը կրնայ առնել գործածութեամբ մազերու եւ արդարաւոր այն հանրածանօթ գեղին որ ճանչցուած է Տիկին Ս. Ա. Ալէնի մազերու Տիկերական վերանորոգիչ անուամբ, որ ճաղատութեան առաջքը կ'առնու եւ գորշ մազերուն կուտայ իրենց բնական գոյնը, զօրութիւնն եւ փայլը:

Կը գտնուի քաղաքակիրթ աշխարհի բոլոր գեղարանաց եւ հումաւաճառաց քով:

Պ. Գէորգ այնպէս յուզեալ եւ սրտառու էր խօսէր՝ որ եթէ ժամանակին զըպրոց մը տեսնելու բախտէն կատուուած չըլլար, այսօր մեր ամենէն զգայուն բեմասանցների կարգէն պիտի համարուէր: — Ո՞վ գիտային ժամանակ, ըս անագորոյն ձիրաններն որքան անստգիւտ հանձարներ անյաջող եւ անպատեհ պարագայների սեւ կոյտի տակ թաղած են, որպէս անծանօթ դաշտի մը մէջ բուսած եւ չորցած ծաղիկ, տակաւին որքան անէճք եւ արհամարհանք պիտի դրոշմուի քո սեւ տապանաքարին:

Դ.

Թերեւս Պ. Գէորգն ալ իւր մօրէ մէջ կ'անիծէր այն ժամանակ որ զրկած էր զինքն այդ բարիքէն. մերթ կը խօսէր եւ շատ կը մտածէր: Իւր լուրջ մտածմանց ծրնունդ եղող այդ խօսքերն մէյմէկ սլաքներ էին գողցես որ կը բանային այնպիսի վէրքեր՝ որոց սպեղանին մտածողը միայն կըրնայ ենթադրել...

Խօսեցան նաեւ միւս ժողովականք, բոլորն էլ համակարծիք ուղղութեամբ, ինչպէս հօր մը անկեղծ հարազատք: Վերջաբանը դրաւ գիւղացեան Սիրուն հետեւեալ դրոշմով. «Սիրելի գրացիներ, Պ. Գէորգ եւ Ձեզմէ շատերդ խօսեցան այնպէս՝ ինչ որ կը յղանային մեր մաքերն եւ ինչ որ տեսած ու գիտած ենք մենք: Ասոր համար այդ կէտը կրկնելն իւր տեղ թող մնայ: Դուք ձեր բարի սովորութիւն մի՛ մոռնաք, յիշելով այն առածն որ կ'ըսէ. «Աղէկութիւնն ըրէ՛ հոգ չէ, ջուր թալէ. եթէ ձուկը չգիտնայ, ստեղծողը գիտէ»:

Այս առածը մենք շատ յարմար կը տեսնենք այս խնդրոյն, մեր ողորմութիւնը կուտանք անոր համար միայն՝ որ որ մանոնց ամենուն տեղը շատ բարիք պիտի գտնենք»:

Երկու ժամու մօտ տեւեց այս նիստն եւ վերջացաւ այսպէս. ժամահարին հրաման տրուեցաւ տնէ տուն շրջիլ եւ ծանուցանել տան տիկիններին որպէս զի բերեն տարեկան պտղին:

Ժամահարը՝ բացարձակ լիսգորութիւն ստացողի մը պէս՝ կայծակի արագութեամբ կատարեց իւր այս պաշտօնն եւ բարեպաշտ տանտիկիններն մէկիկ մէկիկ սկսան իւզի պտուկները ձեռքերին բռնած վեր դալ:

Գլխին պաշտօնն էր քաբ եւ կշիւր պատրաստել ու այդ պատրաստութիւնն ալ տեսնուած էր մեծ փութով: Հիմա նուիրակ Հայր Սուրբի առջեւը դրուած կայ փայտեայ կոշտ կշիւր մը եւ քանի մը կլոր բարեր՝ որոնք են «անկէի եւ օխայի չափերը»: Տուն գլուխ տարեկան մէկ ունկի իւզ՝ պանիր՝ սուվորական տուրք էր: Այս անգամ սովորականէն տարբեր՝ ոմանք կրկինը կը վճարէին իրենց պտղին եւ ոմանք առաջին: Ամեն տանտիկին իւր իւզը կընելէ եւ նուիրականութեան տկի մէջ դետեղելէ ետք, կը փութարինուէր հոգոցով մ'որ կը կարգար նուիրակ հայրն եւ կը զեղուր օրհնութեան առատ տարաբը:

Մի այրի կին՝ որ ունէր միայն ու միայն կով մ'որով կը հայթայթէր իւր եւ իւր որբ տղեկի տարեկան իւզեղէն պաշարն, հոգէ կ'ընէր մի՛ ձեռին մէջը կարծուածէն աւելի իւզ դրուած եկաւ մօտեցաւ կշիւրին յոյժ սիրամած. տուաւ իւր նուէրն այնչափ սիրով, ինչպէս Աւետարանի այն այրին որ նուիրեց իւր լուծման յետին: Ու ես սքանչացած յիշեցի նոյն Ս. խօսք թէ. «Շատ էարկ կ'ինն այս քան զամենեւին»:

Կը վերջանար այսպէս հոգեւոր հարկն ու կը հեռանային այդ բարեպաշտ տիկնայք: Գիւղապետ Սիրունի տան սեղանը պատրաստ էր, հրաւիրակը կուգայ ու նըւիրակ Հայր սուրբի հետ Տանուտէր Սիրունի տունը կը մտնենք, ուր տաք տաք հացերը թորմէն դեռ նոր հանած, ահագին հողէ պտուկներէ մէջ, ճաշ, փիլաւ, գառան միս եւրեւած պատրաստուած, Վարդ տիկնոջ վարդագոյն ձեռագ առատ մատուցարարութեամբ փայտէ քառակուսի և ցած սեղանի վրայ կը շարուէին այդ ամենը խառն կաթնեղէն եւ մեղրէ անխառն կերակուրներէ: Ծաղապատիկ եւ կլոր շրջանակի ձեւով կը նստինք, Հայր Սուրբ կ'օրհնէ այդ օրհնեալ սեղանը, նախ ճնորհակալ եմք՝ կ'ըսենք տանտիրոջ (այսպէս կը արամադէր տեղւոյն քաղաքավարութիւնն) ու կը ճաշենք: Վարդ տիկնոն ուրախ է, շատ ուրախ: Իւր խանդակաթ ճակտի վրայ փայլող բարեպատութեան տարբեր ժպիտները կը զօրացնէին մեր ախորժակներն, ամեն պատահին «խնդրեմ կերէ՛ք» կը պաղատի:

Նուիրակ Հայր Սուրբի սրտաբուլ օրհնութեամբ կը վերջանայ սեղանն եւ բեռնաւորուած յիշատակաց և զգացմանց ծանր բեռներով դուրս ելանք այդ նահապետական յարկէն ու մտախոհ կը հիանայինք թէ ինչպէս անաղարտ կը մնան այսպիսի շինական հիւղակներէ մէջ՝ դարաւոր աւանդութեանց հսկայ պատկերները:

Ե.

Հ. գիւղի բնակչաց գլխաւոր երկու ընտելներ՝ օրբան իրարմէ ազգականութեան տեսակէտով հեռի, սակայն սոցալի մեծ սէր եւ համակրանքը կը տածէին առ միմեանս այդ գերդաստանի անդամներէ գըլխաւորը որ զինչեւ իսկ շարժեց ոմանց նախանձն եւ քսութիւնն իւր թուեալիւ գարշահոտութեամբ մերթ ամպոտեց նոցա սիրոյ վճիռ հորիզոնն: Այս դժուր ժանտախտն ճարակ գտած էր գոգցես այդ երկու ընտանեաց բոլոր անդամներու մէջ. մի միայն զոյգ մ'անմեղ եւ սուրբ սրտեր կային այդ անտէն անարատ միացած ու անբիծ խորանի նման՝ ճշմարիտ սիրոյ տաճար յօրինած. ու այդ տաճարները գամ քան զգամ կը սրբանային եւ ժամանակն իւր անիւներով իրերն ու պարագայները կը կերպարանափոխէր:

Գարնան գեղեցիկ միջօրէի մը ժամանակ, երբ ապրիլի վերջին օրերի արեւը կ'սկսի անարատ կանթեղի մը ճառագայթներու նման յոյս եւ լոյս սփռել բնութեան, եւ ժրջան գիւղացիք փեթակէն նոր դուրս ելնող մեղուաց նման լեռն ու ձոր, արտն ու ափը սփռուած, մէկն իւր արտը կը բարձրէր, միւսը քարերը կը կուտէր, ուրիշ մ'առու կը հանէր (փորէր), նորեկ զւարթ թռչնոց թարմ ձուռուղումների և գարնան անթիւ վտակաց եւ ականց գլղացող կայլակներու անուշ եւ անընդհատ խոխոջների ձայնն աննման ներդաշնակութեամբ երկնային նուագ կը յօրինէր. ծառերն ու ծաղիկներ, մարգերն եւ դարաստանները՝ նորափթիթ կոյսի մը նման պճնուած բնութեան այն ձօն եւ անգուգական արդուզարդներով՝ օրոցմէ եւ ո՛չ միայն նման կըրցաւ զգե՞նու աննման Սողոմոն, չորս կողմէն կը փառագարդէին ամբողջ տեսարանն եւ նոր գարնան փայլն: Անդին ձորի մը մէջքէն յամրաքայլ բայց անուշ եւ արծաթաթափայլ առուակի առնիթեր պուրակի մը

գեղուղէ՛ ծառոց նորածիլ կոկոնների շուքի ներքեւ, մետաքսագոյն եւ թարմ մարգագետնի շուքի կ'արածէին Տանուտէր Ս. Ի. և Մ. Ի. մատուց գառնուկներն՝ որոնք գիտես թէ արբիւռ բնութեան գեղեցկութենէն, շարունակ կ'ոտոտոտէին եւ գլուխ զլսի տալով կատակներ ընելու միտումներ ունէին ու ապա յոգնած՝ մարգերի վրայ հանգարտ կ'ընկողմէին՝ իրենց ստամոքսի պաշարն օրոճալով:

Սովորութիւն կայ գիւղերի մէջ գարնան սկիզբներն՝ երբ տակաւին նոր դուրս կը հանեն իրենց անասունները, գառանց արածելու հոգը՝ նորատի երիտասարդին կամ մանկամարդին թողնել, որպէս զի նորը՝ նորով վարժուի եւ գրասանաց երեւոյթի ներքեւ կեանքի պէտքերէն մինն անըզգայօրէն սովորի լեցնել: Եւ քանի որ Տանուտէր Ս. Ի. եւ Մ. Ի. տունները Սիսակէն եւ Սոսունէն յարմար ուրիշ մը կարելի չէր գտնել նոյն պաշտօնին, այդ երկու հրեշտակներն էին կարգուած պահպան այս փոքրիկ հօտին: Սիսակն եւ Սոսունէն էին այն զոյգ տատրակներն՝ որք ընկողմնած իրենց գառնուկների հանդէպ մեղրահամ խնձորի ծառի մը փարթամ վարդերի առնուհաճ հովանեաց ներքեւ՝ անկուշտ իրար կը նայէին ու կարծես թէ երբեմն ալ յափշտակուած սրտով մէկ մէկու դալար և սիրուն ձեռքերը բռնելով երկինք խոյանալ կ'ուզէին, հոն՝ ուր միայն կարելի է ճշմարիտ սիրոյ համն ու հոտն առնել: Այսպիսի երեւակայութիւններէ ուր ուրեմն արթնցած կ'սկսին բանալ իրենց սրտերն, յորս բաւական օրերէ հետէ՝ սկսած էր վառուիլ եւ չմարիլ այն բնական հօրն՝ որոյ ջերմաչափի աստիճանները մարդկային սեռի երջանկութեան խաւերն են:

Զ.

Սիսակ՝ տասն եւ եօթ գարուններ թեւակոխող սիրուն, քաղցրաձայն սոխակի մը նման՝ կարմիր եւ կլոր դիմօք, լայն եւ ձիւնափայլ ճակտով, աղու եւ մեծ աչուկ գանգրահեր եւ հոծ մազերով միջահասակ, նուրբ եւ վայելուչ կազմուածքով մի երիտասարդ էր, որի նորաբոյս կլոր ժապաւէնն նման քէյթերն արծաթափայլ տառմներով զարդարուն շնորհալի բերին շնորհքը կը գերազանցէին: Ուսած էր նա իւր հօր երկրի մէջ մանկութեան օրերին ընթերցանութեան հետ թեթեւ գրել, ուստի եւ իւր այս վիճակաւ նա աւելի ըզգայուն եւ համակրելի եղած էր քան իւր բոլոր ընկերակիցներն: Իւր հայր Պ. Մ. մասնաւոր սէր մը կը սնուցանէր նորա մասին, ինչպէս Յակոբ նահապետ առ Յովսէփ, եւ ահա՛ այդ պատճառաւ Սիսակի եղբարքն եւ հօրեղբարք պղտիկ ատելութիւն մը կը պահէին նորա դէմ:

Սոսուն՝ երրորդ զաւակն էր տանուտէր Սիրունին. տասն եւ չորս մայրաների մէջ բացուող վարդերի մը նման՝ նոր էին ծլած իւր սրտի վարդահոտ կոկոններն: Իւր դէմքը կիսամիսայ լուսնի անաղարտ դիմագծի ձեւ. թուխ եւ խոշոր այցերն՝ երկար եւ նուրբ արտեւանուկների ներքեւ կը խաղային ամեն ակնթարթին հմայք մ'արտադրելով: Սուրամուր յոնքերը, լայն անջրպետով մը իրարմէ գառուած՝ երկնային կամարի օրինակով ծովափայլ աչքերը կը հովանաւորէին: Շուրթերը նուազ կեղեւի թանձրութեամբ՝ մարգարտաշար եւ ձիւնափայլ ատամանց վրայ՝ Ս. խորանի մը շնորհալի դը-

րան կերպարան կուտային այն բերին, ուրիշ արտաբերուած ամեն մի բառ մոգական ազդեցութիւն կը գործէր: Թուխ եւ հարուստ մազերն՝ իրենց դիւթիչ խոսկոյիկներով կը զարդարէին այնպիսի գեղեցկութեամբ մ'այն ճակատն՝ որոյ փայլ կը թափանձէր ողջոյն դիմագծին. ու այդ յաւերժաճարսական գեղեցկութեան հետ, նորուղէ՛ նախնի մը նման բողբոջած սիրուն հասակն իւր կարմրագոյն եւ պարզ գգեստուց ներքեւ՝ այնպէս գրաւիչ եւ համակրելի էր որ ամեն ատեն երբ կը տեսնէր զայն Սիսակ, արբիւռ կը մտածէր թէ օրբան քաղցր է իրական կեանքը...

(Շարունակելի)
Ղ. Պ. ՆԱԶԱՊԵՏԵԱՆ

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

Շ Ա Յ Ո թ Ա Կ Ա Ն Լ Ր Ո Յ

Օգոստ. 29 էՆ Սեպտ. 4

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Պուրկարական խնդրոյն կարգադրման համար Ռուսիոյ առաջարկը տէրութեանց ընդունել տալու համար, Բ. Դուռը Գերմանիոյ միջնորդութիւնը խնդրած էր: Արդ, Գերմանիա պատասխանած է որ, եթէ օտկառավարութիւնը կը հաւանի ռուսական առաջարկը՝ մի եւ նոյն ժամանակ հաղորդել Անգլիոյ, Աւստրիոյ եւ Ռուսիոյ, եւ եթէ Ռուսիա, որում կը պատկանի այդ առաջարկի նախաձեռնութիւնը, պաշտօնապէս հաղորդէ զայն յիշեալ տէրութեանց և կամ եթէ Բ. Դուռն ինք ստանձնէ այդ առաջարկն, յայնժամ Գերմանիա կը հաւանի ընդունիլ զայն եւ յանձնարարել միւս Տէրութեանց:

Նախարարաց խորհուրդը շաքաթէ մ'իւր կը խորհրդակցի Գերմանիոյ այս ծանուցադրոյն տրուելիք պատասխանին վրայ: Սեպտ. 1ին տեղի ունեցաւ ի Սոֆիա մեծ միգլին մը բողոքելու համար ընդդէմ Պ. Քարալլէլօֆի որ իւր լրագրին մէջ յօդուած մը հրատարակելով սաստկապէս քննադատած էր Ֆէրդինանտ իշխանն: Հայրենասիրական Դաշնակցութեան պետքը պահանջեցին Պ. Քարալլէլօֆի ձերբակալուիլ:

Ամբոխն, ի ճահ աղաղակելով, յարձակեցաւ Պ. Քարալլէլօֆի տան վրայ և ապակիները խորտակեց: Պ. Քարալլէլօֆի թերթին տպագրատունն եւս նոյն բաղդէն ունեցաւ: Ռատիկանութիւնն յաջողեցաւ բուռել յարձակողները:

Ամբոխն ապա գնաց Պալատան առջեւ համակրական ցոյց մ'ընելու համար: Ֆէրդինանտ իշխանը պատգամն ելաւ, եւ շնորհակալ եղաւ ամբոխին իւր հայրենասիրական ցոյցերուն համար:

Ամբոխն ապա գնաց Պ. Սեմապուլօֆի, որ ըսաւ թէ ցորչափ պուրկարական դատն այսպիսի պաշտպաններ ունենայ, չպիտի կորսուի:

Մեսինայէ հեռագիր մը կը ծանուցանէ թէ անցեալ կիրակիէ 30 հոգի մեռեր են քրեւոյց եւ երկուշաբթի 60 հոգի բուրայէ բռնուելով, 40 հոգի մեռեր են: Բնակիչը մեծ բազմութեամբ կը հեռանա քաղաքէն:

Ռուսական հեռագիր մը կըսէ թէ Եւրոպական Հէրադի մօտ կը գտնուի բազմաթիւ կուսակիցներով:

—Աւստրիոյ կայսրն այս օրերս Մորա-
վիայէն Դրանսիական կուգայ տարեկան
գորահանդէսներ կատարելու, և իրեն կըն-
կերանայ Քալիքի կոմս :

—Պ. Ռուսիէ եւ Պ. Ֆրանսէն Բարիզ
վերադարձան ուր Պ. Վատինկոն իրենց
ծանօթացուց Անգլիոյ հետ բանակցու-
թեանց վերջին երեւոյթն, որ նպատաւոր
է Սիւէդի ջրանցին չէզոքացման պարագա-
յից եւ Նոր Հերթեան կղզիներուն ձը-
րանացուց կողմէ թողման նկատմամբ Գրան-
սա եւ Անգլիա համաձայնելու վրայ են :

—Հռոմէ կը հեռագրուի սեպտ. 7 թուով
թէ Վատինկոնի եւ Ռուսիի մէջ ամբողջ
գիւղերու կաթողիկոսիւն ընդունելուն
վերաբերեալ ծայրայեղ պատմութիւնը ուն-
ական մեքենայութիւն մ'են լոկո :

—Օւրիշքի Ռոմանօ պապական թերթը
կը հրքէ այն գրոյցներ որոց նայելով Վա-
տինկան մատուցելու Գրանսիոյ վերջին
դէպքերուն մէջ : Կը յարէ թէ այդ օրինակ
անխելութիւններ Վատինկանի դէմ թշնա-
մութեան, կամքադաբական դիւրահաւանա-
լի դիտումներու միայն կրնան վերագրուիլ :

—Յորմէ հետէ Կարս անցաւ Ռուսաց
սիրապետութեան ներքեւ, կովկասեան իշ-
խանութիւնն հետամուտ է միշտ հաստա-
տել Կարսի հողերուն վրայ ունեւ եւ գեր-
ման գաղթականներ : Քանի մը ամիս առաջ
ուսու լրագիրը ծանուցին թէ 100ի չափ
գերման գաղթականք Կարս կ'ուղարկուին
կառավարութեան ծախիւք, մինչդեռ Կար-
սի եւ Աղեքսանդրաբոլի հայք հողի անբա-
ւականութեան պատճառաւ միշտ խնդիրը
կը ներկայացնեն ուսու կառավարութեան :
Այս օրերս թիֆլիսէն անցնելով դարձեալ
Վալի Կարս ուղեւորած են ուսու գաղ-
թականաց նոր խումբեր, ամենքն ալ խղ-
ճալի վիճակի մէջ :

—Քայսիկն Կալիպատայի թղթակիցը կը հե-
ռագրէ. «Պարսկաստանի ընդհանուր հիւ-
պատոս Միրզա Հիւսէյն Ղուլի Խան» Տիկին
Տեֆրիկի մատոյց Արեգական պատուանշա-
նը, զոր նուիրած է Դահլէ Տիկինն յատուկ
նամակաւ մը շնորհակալութիւն յայտնեց :
—Կիմանանք թէ Դահլէ յառաջիկայ տարին
պիտի այցէ Եւրոպա, եւ նախ Բեդերս-
պուրկ պիտի երթայ : Փանր երկիւղ կայ թէ
Անգլիա Դահլէն հետ դաշնակցութիւն
մը չ'ընէ եւ իրական աջակցութեան խոս-
տում մը չտայ նմա, Դահլէ իւր այս ուղե-
ւորութեան միջոցին Ռուսիոյ թեւարկու-
թեան ներքեւ պիտի մանէ բոլորովին Հարկ
էն յիշենք թէ ո՛րչափ աւելան Ռուսիոյ
պառնալիքներն՝ այնչափ աւելի շահ ու-
նինք մշակելու Պարսկաստանի բարեկամու-
թիւնը :

—Ռուս Կառավարութիւնը ցարդ թոյլ-
տուութիւն չէր ըրած Վ. Հիւկոյի ազատա-
լուծ թատերերգութեանց ներկայացման ի
Ռուսիա : Բայց Քրանքո-ուսու նորածին դաշ-
նակցութիւնն հրաշքներ կը գործէ : Ահա
արդիւրեւ կը վերնայ, եւ Պ. Թաթիլէզ կը
թարգմանէ զՀեյնսն, ներկայացուելու հա-
մար ի Մոսկուա :

Ն Ե Բ Ի Ն

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ
Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ Գ. Կարգի
Օսմանիյէ պատուանշան շնորհել կայս. պա-
տան թիֆլիսէն Տր. Մանուէլ պէյ իւ-
թիւնեանի :

—Տրապիզոնի Տեֆէրտար անուանե-

ցաւ երմտական ժողովոյ բարուադարներէն
Միւհիէտտին պէյ :

—Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ եր-
րորդ Կարգի Օսմանիյէ պատուանշան շնոր-
հել Մանիքէ-Օքէնիսալ լրագրոյ տնօրէն Պ.
Պէլիսի :

—Վեհ. Սուլթանն իմանալով Մանա-
դըրի նախորդ կուսակալ Ալի Քէմալի փա-
շայի կարօտ վիճակն, հրամայեց որ Իւր մաս-
նաւոր արկղէն 400 ոսկի վճարուի նմա իւր
ճամբու ծախք :

—Պարսիկի կուսակալ անուանեցաւ Զ.
գորարանակի (Պաղտատ) հրամանատար
Միւշիկ Հաֆըզ փաշա որով Օսմանիյի ա-
կանակուռ պատուանշան տրուեցաւ :

—Քրիւբի զինագործարանին տէր Պ.
Ֆրիտրիս Քրիւբ, որդի հանգուցեալ Քրիւ-
բի, մայրաքաղաքս կը գտնուի շարաթէ մ'ի
վեր եւ սիրալիր մեծարանօք կը պատուա-
սիրուի Վեհ. Սուլթանին կողմէ :

—Բէթիւր ընդհ. տնօրէն Պ. Օպուանօ վար-
չական խորհրդոյ վերջին նստին ներկայա-
ցուց ընկերութեան երրորդ շրջանի (1886-
87) հաշուեկշիռն որ փակուած է փետ-
րուար 28 ին : Այդ հաշուեկշիռն կ'երեւի թէ
Բէթիւր 75,000 ոսկւոյ բաց մ'ունի Գ. շըր-
ջանին մէջ, մինչ Ա. շրջանի բացն էր 180
հազար ոսկի եւ Բ. շրջանի բացն 100,000
ոսկի :

Պ. Օպուանօ երեքշաբթի օրը մեկնեցաւ
մայրաքաղաքէս ի Բարիզ ուստից պիտի եր-
թայ նաեւ Պերլին եւ Վիէննա, իւր պաշ-
տօնին վերաբերեալ գործոց պատճառաւ եւ
մէկ ամսէն պիտի վերադառնայ :

—Մաքսային վարչութիւնը տարեկան
180,000 ոսկւոյ գումար մը կը վճարէ հաւ-
րային պարտուց թողեալ հասութից վար-
չութեան : Արդ, այս անգամ Մաքսային
վարչութիւնն ամբողջովին վճարեց երմտա-
կան 1503 տարւոյ առաջին վեցամսէի գու-
մարն 90,000 ոսկի :

—Թուրք լրագրաց մէջ հրատարակեալ
պաշտօնական աղբ մը կը ծանուցանէ թէ
կայս. Իրաւէիւ վաւերացած որոշման մը
համաձայն էնկիւրիի եւ այլ գաւառաց մէջ
Բեթիւր արտադրող այծերու իւրաքանչիւրէն
առնուած տարեկան 4 զրուշի տուրքին տեղ՝
յառաջիկայ երմտական 304 տարւոյ Մարտ
ամսէն սկսեալ 3 զրուշ պիտի առնուի : Այս
որոշում, որ ծանուցուած էր նախապէս,
պաշտօնապէս հաղորդուած է հարկ եղած
գաւառները :

—Պապը Ս. Գրէգոր պատուանշանի Գ.
աստիճանը նուիրեց Արտաքին գործոց նա-
խարարութեան հաշուակալ Խաքրեան Գրի-
գոր էֆ.ի եւ Օտար մամուլի գիւանի դեր-
տնօրէն Փափագեան Սիմօն էֆէնիին :

—Պրուսայէն կը գրեն թէ ուրբաթ օրը
կարկառաւորաւ սաստիկ անձրեւ մը տեղաւ
սկսեւ է քաղաքին մէջ. կը պատմուի թէ
30-35 տարիէ ի վեր այս տեսակ բան չէր
տեսնուած : Քանի մը ժամուան մէջ ժողոց-
ներն առուակներու խոխարկուեր են, շատ
մը խանութներ ողողուեր եւ գաղթակա-
նաց բնակած տունները փլեր են :

Յայտնի է թէ երկար ժամանակէ ի վեր
երաշտութիւն կը տիրէր ի Պրուսա :

—Ռուսիայի երկաթուղեաց արտօնատէր
Պաուս Հիրշ իւր ներկայացուցչին միջոցաւ
Բ. Դրան խնդրագիր մը տուած է յորում
կը յայտնէ թէ մտադիր է Ռուսիայի երկա-
թուղեաց մեծաշնորհ վաճառել միացման
գծերու շինութեան օսմ. ընկերութեան եւ
ինք բոլորովին գործէ քաջուիլ :

—Քարաբերդի հրամանատար Ֆէրիզ Ալի
Բիշա փաշա մեռեր է :

Ա Ղ Գ Ա Յ Ի Ն

—Ասորեոց Ս. Կաթողիկոսն, որ ի Մար-
տին, տեղեկագիր մ'ուղղելով Ամեն. Ս. Պատ-
րիարք Հօր, մանրամասն տեղեկութիւններ
տուած է մարդորսութեան համար ճիշդու-
իւց կողմէ նիւթուած ամեն տեսակ դա-
ւերու վրայ, ինչպէս նաեւ այս պատճառաւ
թէ՛ Հայոց եւ թէ՛ իւր ժողովրդեան սպառ-
նացող վտանգին վրայ :

Ս. Պատրիարք Հայրը պատասխանած է
թէ շնորհիւ կայս. բարեխնամ կառավարու-
թեան՝ այդ սպառնացող վտանգին առաջըն-
առնուած է :

Ասորեոց եկեղեցին Արեւելից մէջ ամե-
նէն աւելի զրկանք եւ տառապանք կրած է
ճիշդութեամբ երեսնէն, ուստի գովեստից ար-
ժանի է Ասորեոց Կաթողիկոսին իւր ժողո-
վրդեան նկատմամբ տածած խնամքն եւ հո-
գածութիւնն, որով կ'աշխատի առաջն առ-
նուլ սպառնացող վտանգին որ արդէն բա-
ւական հարուած տուած է իւր եկեղեցւոյն :

—Գոհութեամբ կ'իմանանք թէ ձեռնար-
կուած է Սկիւտարի Ս. Կարապետ եկիւղեց-
ւոյն վերաշինութեան : Հաւանութեամբ եւ
աջակցութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր,
հանգանակութիւն բացուած է ի նպատ-
վերաշինութեան յիշեալ եկեղեցւոյ, որուն
համար 1,500է մինչեւ 2,000 ոսկի ծախք
կ'ենթադրուի : Սկիւտարի եւ Գատը գիւղի
երեւելիք խոստացած են հայկայթեւ այս
գումար, եւ կը յուսացուի հանգանակու-
թիւնն արդիւնաւորել ո՛չ միայն քանի մը
երեւելեաց կարեւոր նպաստներով, այլ եւ
ընդհանուր բարեպաշտ ժողովրդեան սիրա-
յօժար մասնակցութեամբ : Վերաշինու-
թեան նախնական աշխատութիւնը արդէն
սկսած են ամենայն փութով :

—Տիկին Աղեքսանդրեան, ըստ հրաւերի
Անգլիոյ Տիկին Դեսպանուհւոյն, երկուշաբ-
թի օրը Թարապիոյ դեսպանատունը գնաց՝
տեղեկանալու համար այն միջոցներուն
զորս Լէտի Հուսայդ հաճած է ձեռք առ-
նուլ, նպատակելու համար Սկիւտարի տա-
րաքաղդ հրկիւղեց, Տիկին Դեսպանուհին
նախ հինգ օսմ. ոսկի նուիրեց, յայտնելով
որ այս գումար գործածուի մանկանց, ծե-
րոց եւ հիւանդաց կաթ եւ ապուր տալու
համար : Լէտի Հուսայդ խոստացաւ ամեն
շաբաթ նոյնքան դրամ տալ այս նպատա-
կաւ, մինչեւ որ կարենայ մասնախումբ մը
կազմել աղքեցիկ անձերէ, աւելի ընդար-
ձակ հիման մը վրայ նպաստելու համար
հրկիւղեց :

—Բերայի քարոզիչ Արժ. Տ. Ներսէս Թ.
վարդապետ Արսլանեան Ամեն. Ս. Պատրի-
արք Հօր հրամանաւ կիւրակէ օրը Պէոյիք-
տէրէի ուսական դեսպանատունը գնաց ի
շնորհաւորութիւն Աղեքսանդր Գ. Կայսեր
անուան տօնախմբութեան :

—Ի հանգիստ բարեյիշատակ Օտեան
Գրիգոր էֆ.ի, Ամեն. Խրիմեան Սրբազան
կիւրակէ օրը հանգիստաւոր պատարագ մա-
տոյց ի Ս. Թագաւոր եկեղեցին Գատը-գիւ-
ղի, ուր լցուած էր խուռն եւ երկիւղած
բազմութիւն մ'աղագայնաց : Ս. Հայրիկ սըր-
տառուջ քարոզ մը խօսեցաւ եւ օրհնեց յի-
շատակն իւր ողբացեալ բարեկամին : Ներ-
կայ էր նաեւ Ամեն. Ս. Պատրիարքն որ կա-
տարեց հոգեհանգստեան պաշտօնը :

—Արտաքին գործոց նախարարութեան
բարտուղար-թարգման Վսեմ. Միքայէլ էֆ.
Կիւլապեանի ամուսնութիւնն ընդ Աղն.
Օր. Եւփիմէ Սարրաֆեանի՝ մեծ չքով կա-
տարուեցաւ կիւրակէ իրիկուն ի Գատը-
գիւղ, ի ներկայութեան ընտիր եւ խուռն
բազմութեան մը : Կնքահայրութիւնն ըս-
տանձնած էր Արտաքին գործոց նախարար
Վսեմ. Սայիտ փաշա, որոյ կողմէ փոխա-
նորդաբար ներկայ էր Վսեմ. Գրիգոր էֆ.
Խըտըրեան :

Guerlain de Paris.

15, Rue de la Paix.

ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԸ ՅԱՆՁՆԱՐԱՐԵՆԻ ՀԵՏԵԻՆԱԼ ՀՈՏԱԻՏ ՆԻԻԹԵՐԸ Eau de Cologne Impériale. Sapoceti, օճառ արդուզարդի համար Ambrosial cream, օճառուտ քաղցածիկ մարդու համար. Crème de Fraises մորթի կակուղցնելու համար. Poudre de Cypres զովացնելու եւ ձերմկցնելու համար մորթի. Stillbördeիայլ տալու համար մազերուն եւ մորուքին. Eau Athénienne et Eau lustrale հոտ խնկելու եւ մաքրելու համար գլուխը. Alcoolat de Cochlearia ակռայներու համար. Eau de Chypre արդուզարդի համար: Թաշկինակի համար հոտաւէտ նիւթեր՝ Héliotrape, Pao Rosa, Shore's caprice, Maréchale Duchesse, Marie Christine.

11-26

ԱՌԱՋՆՈՐԴ

ԹԱՐԳԱՆՈՒԹԵԱՆ ԳԱՂԻԵՐԷՆ ԼԵՋՈՒԻ

Խ. ՍԻՄՕՆԵԱՆ

Վաւերացեալ յԱռաջնական Խորհրդայ Աղէ. Վաւեր:

Այս դասագիրքն իւր գլխաւորումը մէթոտին եւ ընթերցելի հատուածոց ընտրութեան կողմանէ ընդհանուր հաւանութեան արժանացած եւ մուտ գտած է մայրաքաղաքիս եւ գաւառաց գրեթէ բոլոր դպրոցաց մէջ: Ըստ վկայութեան գաղղ. լեզուի ձեռնհաս ուսուցչաց՝ անհրաժեշտ դասագիրքն է առ մեզ գաղղիերէնէ ի հայ լեզու թարգմանութեան վարժութեան համար եւ ընտիր առաջնորդ մ'է նորաւարժ հայ մանկան գաղղիերէն լեզուի նախնական տարերց յիւրութեամբ ընտելանալու: Կեդրոնատեղին է Պիլէոճեան դրատունն ի Յակոբեան խան. կը գտնուի եւ այլ գրաւաճառաց քով:

Գինն է 3 դահեկան

1-12

1120

Ն ԿԱՐԱԳՐԱԳՐԱԿԱՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Ի ՀԱՅԱՐԱՆԱԿԱՆ ԳԱՆՈՒՍ

ՄԱՆՈՒԷԼ Կ. ՄԻԲԱՆՈՐԵԱՆԻ

Բաժանեալ յերիս մասունս

Սոյն երկասիրութիւնն որ Սահակ Մեսրոպեան գրական մրցանակի առաջին տաժանին արժանացաւ, կը վաճառուի ամեն հայ գրաւաճառաց քով, եւ կեդրոնատեղին է Սոյանեան Եղբարց գրատունը, Պոլիս, Չաքմազճըլար - Եօքուշու, թիւ 51:

Գաւառներէն եղած յանձնարարութիւնք ճշդիւ կը կատարուին: Գոհացուցիչ զեղչ կը լինի, մանաւանդ աւելի գնողաց համար:

Ա. և Գ. մասերն՝ 8 ական, իսկ Բ. մասը 10 զրուշ:

1119

1-5

ادمان

ԻՏՄԱՆ

ԿԱՄ

ՏԱՃԿԵՐԷՆ

ՄՏԱՄԱՐՁՈՒԹԻՒՆ

Տէր եւ Հրատարակիչ

ՀԱՅ ԳՐԱՇԱՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Սոյն տաճկերէն ընթերցանութեան գիրքն որ երեք մասերէ կը բաղկանայ, հաշակաւոր Թուրք գրադէտ եւ Օսմանեան բարձրագոյն վարժարանաց ուսուցիչ Ալի Նազիրմա սէյի կողմէ պատրաստուած է ըստ Բէլլիսիէի դրութեան, եւ որոյ առաջին մասին տպագրութիւնն արդէն տպուած լինելով, երկրորդ տպագրութեան արժա-

նացած է կարեւոր յաւելումով, այն է՝ դժուարիմաստ բառերուն բացատրութեամբն:

Սոյն դասագիրքն արդէն Օսմանեան, Յունական եւ Հրէական վարժարանաց մէջ մուտ գտած է գնահատուելով նոցա կըրթական տեսչութիւններէն, եւ գոհութեամբ կը յիշատակենք թէ մեր կըրթական Տեսչութիւնն եւս արժանապէս գնահատելով եւ Պատրիարքարանի կնքով վաւերելով ներմուծած է զայն ընտրեալ դասագրոց մէջ, իբրեւ օսմանեան ընթերցանութեան մէկ հատիկ դասագիրք մը:

Գինն է Ա. մասին 2 զրշ. Բ. մասին 2 ու կէս զրշ. և Գ. մասին 3 զրշ.

Տպագրութիւնն յոյժ մաքուր:

Ազգային վարժարանաց համար հարկւրին 20 զեղչ կ'ըլլայ: 1117 1-5

Վասն Որոշանաւան Տնօրէն-Պատասխանատու

Ե. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐ. ԱՐԵՒԵԼԻ ԵՒ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐԱՑ

ՄԵՏԵՍ Ս. Ա. ԱԼԼԷՆԻՆ

ԵՇԻՄԵՐԷՆՈՒՆՈՒ ՄԵՐՈՒ ՆՈՐՈԳԻՐ

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)



Ճիւղմակ ընկած մազերուն գոյն, վերնիճ ու գեղ կուտայ: Կը նորոգէ անոր կեանքը, ոյժը եւ աճումը: Գլխու թեփը շուտ մը անկեղծութիւն կ'ընէ: Եւ անուշ հոտը առատ է ու հեշտակ:

“Մէկ շնչը կը բաւէ:” Այդ փորձը ունեցան ամենքը որոնցմիտքով առաջ մազերը ընկած գոյնին դարձան, եւ ճաղատ տեղերը մաքուր ծածկուեցան:

Կերկ չէ, եւ ամենեւին զեան մը չընէ: Թէ որ կ'ուզես թարմ մազ ունենալ եւ բոլոր կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շնչ մը ստացիր ԿԵՆԷՆ Ս. Ա. ԱԼԼԷՆԻ ՆԱՄԱԶ ԽԱՐԿԱՆ ԴԱՅՆ ՆՈՐՈԳԻՐԷՆ:

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Եւրոպայի Բարիզ ու Նիւ Եօք: Կը վաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղագործներու եւ անգղիացի գեղագործներու քով:

Կը գտնուի Ն. և Ժ. Գանգիւր եղբարց բրիտանական գեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էտմընտ Գարուան. Անգլիական միջերանոց, Նիւքսթը Գալտըրըմ. եւ Իզիտոր Լազանտէլլա 455, Բերա Մեծ փողոց:

ՀԱՐԱՆՆԵԿԸՆ ԴԱՆԿԵՓՈՒՆԸ

ԳԵՂԵՑԿԵՑՈՒՆՈՂ ՄԵՐՈՒՆՈՑ ԳՈՅՆԸ, ՄԻՇՏ ԴԱՆԿԵՓՈՒԹ: ՄԻՇՏ ԹԵՐՄ:



Ընգամուան մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիութիւնը եւ բազմաթիւ փոշիներէ: Եւ այն անգամ գործածելով ալ, որ քանի մը վայրկեանի գործ է, պիտի աւանդուի իսկոյն որ երեսը, վիզը, թեկը եւ ձեռքերը պիտի առնուն անոյշ փափկութիւն մը եւ մարմարիտի փայլ, հանգերձ շուշանի եւ վարդի գունով եւ բուրմամբ:

Սապրոնի գրգռիչ յատկութիւնները կը հանդարտեցուն: Ընհետ կ'ընէ մորթի սեւեւը, երեսի եւ ձեռքի ցաները, արեւայրուքը, եւ ուրիշ ամեն բրտութիւն եւ բժաւորութիւն: Եւ այս ամեն բանով անկարելի կ'ընէ մատնուիլ թէ արհեստով գեղեցկացուած է:

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Եւրոպայի Բարիզ ու Նիւ Եօք: Կը վաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւղագործներու եւ անգղիացի գեղագործներու քով:

Կը գտնուի Ն. և Ժ. Գանգիւր եղբարց բրիտանական գեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էտմընտ Գարուան. Անգլիական միջերանոց, Նիւքսթը Գալտըրըմ. եւ Իզիտոր Լազանտէլլա 455, Բերա մեծ փողոց:

Կը գտնուի Ն. և Ժ. Գանգիւր եղբարց բրիտանական գեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էտմընտ Գարուան. Անգլիական միջերանոց, Նիւքսթը Գալտըրըմ. եւ Իզիտոր Լազանտէլլա 455, Բերա մեծ փողոց:



ԿԵՆԷՆ, ԱՃՈՒՄՆ և ԳԵՂ ՄԱՋԵՐՈՒ:

ՄԵՂԵՐՈՑ

ՄԵՐՈՒՆՈՑ ՄԵՂԵՐՈՑ ՆՈՐՈԳԻՐ

Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ձերմըկած կամ գունաթափ մազերը. Կը դադրեցունէ անոնց թափելը. Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ:

Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շնչերու մէջ:

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Եւրոպայի Բարիզ ու Նիւ Եօք:

Կը գտնուի Ն. և Ժ. Գանգիւր եղբարց բրիտանական գեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էտմընտ Գարուան. Անգլիական միջերանոց, Նիւքսթը Գալտըրըմ. եւ Իզիտոր Լազանտէլլա 455, Բերա մեծ փողոց: